կու երեք օր արևուն դիմաց չորնան և անկէց վերջը դիւրաւ կը վառին. (կ'առնեմ հողաբափ-ներն և դուրս կ'նչեմ)։

Օսման. — Ո՜ւր էր թէ այդ անիծուած հողա-թափները մէջ մ'անհետանային և խեղճ տի-բոջս նորանոր թշուառութեան պատճառ չըլ-լային... Բարի՜ ազաս, կը տեսնեմ թէ գիս իր որդւոյն պէս հիմայ կը սիրէ... Ո՜րչափ կ'ուրախանամ տեսնելով որ հիմայ առաջուան պէս չլացաւ իր ոսկիները կորսնցնելուն վրայ... Ո՜հ, ի՜նչ մեծ փոփոխութիւն... կար-ծես ալ սիրտն անոնց կապած չէ... մանա-ւանդ թէ կարծես կ'արհամարհէ ոսկիները և ունեցած բոլոր հարստութիւնները... (ծնրա-դիր կ'աղօթէ) ով Աստուած իմ, Աստուած իմ. լսէ՛ աղօթքիս. ազատէ՛ տէրս ազահութենէ և զինքն երջանիկ ըրէ։

(Վարագոյրը կ'իջնի)

(Շարայարելի) Հ. Ա. ՏԻՐԱՑԵԱՆ

ԱՇԼԵՒԱՇԼԻՔ

ՀԱՅ ՆՈՐԱԳՈՅՆ ԿՕՄՊՈԶԻՏՕՐՆԵՐ

(20-րդ դար)

ԼԵՆԻՆԱԿԱՆ

(Շարունակութիւն տես Բազմավէպ, 1926 էջ 175)

ԼԵՆԻՆԱԿԱՆԻ (ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻ) ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՍՏՈՒԴԻԱՆ

Լենինականի Ստուդիան հիմնուեց 1924 թ. Յունիսի 1-ին երգի, ջութակի, դաշնամուրի թէօրիայի, սոլֆէջիոյի և արևելեան գործիքների դասարաններով։

Սովորել ցանկացողների թիւն ուսումնական շրջանի սկզբում հասնում էր մօտ 500 հոգու, որոնցից ընդունեցին միայն 400 հոգի, համապատասխան շատ չունենալնուն պատճառով։ Ուսումը շարունակեց մինչև սեպտեմբերի 1-ը, որից յետոյ ստուդիան փակուեց, նորից վերակազմելու նպատակով։ Այս ժամանակաշրջանում կազմակերպուեց վեց երաժշտական երեկոյ, որտեղ հանդէս եկան ստուդիայի ուսանողները և դասատուները։ Կարճ միջոցում ստուդիայի ուսանողութեան միջից վերածուեց երաժշտական անգրագիտութիւնը։

1924 թ. Հոկտեմբերի 15-ին վերաբացուեց Ստուդիան երգի (դասատու Տ. Ն.ալբանդեան), ջութակի (Տէր-Ղուկասեան), դաշնամուրի (Գեանջումեան), թէօրիայի, հարմոնիայի, սոլֆէջիոյի (Դ. Ղազարեան), խմբերգի (Պապեան), սինֆոնիկ օրկէստրի (Կոնիլէնկո) դասարաններով։

Ուսումնական տարեայ ընթացքում ուսանողների մէջ կատարուեց զտում, որով ստուդիայում ընդունուեցին 182 ուսանող—ուսանողուհիներ, որոնք համարեա թէ բոլորն պրոֆմիութեան անդամներ են կամ նրանց զաւակները։ Ստուդիայի շուրջն է հաւաքուել նաև քաղաքի և Ամիրկոմի (Ամերիկեան կոմիտէի) զարոցների երգ—երաժշտութեան դասատուները։

Ուսումնական շրջանում կազմակերպուեց 8 ուսանողական փակ և բաց երեկո-

digitised by A.R.A.R.@

Ներ և Բանակումբում 4 համերգ երեկոյ՝ բանուորների համար։ Ցարևայ վերջին՝ տուեց ցուցադրական երեկոյ, որտեղ ցուցադրուեց ուսանողութեան յառաջադիմութիւնը։ Նոյն ժամանակաշրջանում տեղի ունեցաւ գեղխորհուրդի նիստը Երևանի Պետ կոնսերվատորիայի վերատեսուչ Արշ. Աղամեանի և երաժշտագէտներ Ալ. Սպենդիարեանի ու Նիկ. Տիգրանեանի մասնակցութեամբ, որտեղ ընդունուեց կոնսերվատորիայի և ստուդիայի ծրագրի միատեսակութիւնը, որով ստուդիան աւար-

Լենինականի երաժշտական ստուդիայի գեղարուեստական խորհուրդը

1. Տիգ. Նալբանդեան — 2. Կար. Ղուկասեան — 3. Աննա Տէր-Գրիգորեան — 4. Դան. Ղազարեան (վարիչ) — 5. Նինա Գանջումեան — 6. Լեոն Ղալթուղեան — 7. Յուլիա Գէսարաբեան — 8. Կար. Պապեան — 9. Մեր. Աբլով։

տողները հնարաւորութիւն կ'ունենան առանց դժուարութիւնների շարունակել կոնսերվատորիայում։

Ինչպէս ստուդիան, նոյնպէս և ուսանողներից շատերը զուրկ են եղել անհրաժեշտ գործիքներից, որի հետևանքով ակզբնական շրջանում աշխատանքներն ընթացել են շատ մեծ դժուարութիւններով. Ներկայումս այդ բացը մասամբ վերացուած է։ Առաջիկայ ուսումնական տարեայ համար Լուսաբաժինը կազմել է նոր նախահաշիվ, որն ընդգրկում է 9500 ռ. զումար. դրանով ստուդիան դուրս գալով տնտեսական ծանր դրութիւնից՝ հնարաւորութիւն կ'ունենայ իր աշխատանքները կենտրոնացնելու ստուդիայի կրթականի շուրջը, որով կը գոհացնի ուսանողութեան երաժշտութեան պահանջը։

Ստուդիայի վարիչ՝

Լենինական ԴԱՆԻԷԼ ՂԱԶԱՐԵԱՆ

digitised by A.R.A.R.@